



Los Angeles Unified School District

Գլխավոր օգտագործման քաղաքականություն (ԳՕՔ)
տարածքի համակարգչային համակարգերի համար
Տեղեկատվություն ուսանողների և ընտանիքների համար

Նպատակը

Տարածքի Գլխավոր օգտագործման քաղաքականության (ԳՕՔ) նպատակն է կանխել առցանց օգտատերերի կողմից անօրինական մուտքը և այլ անօրինական գործողությունները, կանխել գաղտնի տեղեկատվության անօրինական հրապարակումը կամ մուտքը և պահպանել օրենսդրության պահանջները, ներառյալ առանց սահմանափակումների «Համացանցում երեխաների պաշտպանության մասին» օրենքը (ՀԵՊՕ), «Համացանցում երեխաների գաղտնիության պահպանության մասին օրենք» (ՀԵԳՊՕ), և «Կրթության վերաբերյալ ընտանիքի իրավունքների և մասնավոր կյանքի անձեռնմխելիության մասին օրենք» (ԿԸԻՄԿԱՕ): Դեռ ավելին, ԳՕՔ պարզաբանում է տարածաշրջանի տեխնոլոգիայի կրթական նպատակը: Ինչպես երևում է այս քաղաքականության մեջ “օգտատերը” այն անձն է, ով օգտվում է համակարգչից, համացանցից, էլեկտրոնային փոստից և էլեկտրոնային կապի կամ տարածքի կողմից ապահովված սարքավորման այլ ձևերից (ցանց) անկախ օգտատիրոջ ֆիզիկական գտնվելու վայրի: ԳՕՔ կիրառվում է նույնիսկ, երբ տարածքի կողմից ապահովված սարքավորումը (լափթոփ, պլանշետ) օգտագործվում է տարածքի գույքից դուրս: Դեռ ավելին, ԳՕՔ կիրառվում է, երբ տարածքի հետ առնչություն չունեցող սարքերը մուտք են գործում Տարածքի ցանց:

Տարածքը օգտագործում է տեխնոլոգիայի պաշտպանության միջոցներ արգելափակելու կամ հնարավորինս մուտքը զտելու տեսողական և գրավոր նկարագրություններից, որոնք անվայել, պոռնկագրական կամ վնասակար են անչափահասների համար: Տարածքը կարող է և պետք է վերահսկի օգտատերերի առցանց գործողությունները և մուտքը, վերանայի, պատճենահանի և պահպանի կամ վերացնի ցանկացած հաղորդագրություն կամ ֆայլեր և անհրաժեշտության դեպքում ուղարկել դրանք մեծահասակներին: Օգտատերերը չպետք է ակնկալեն գաղտնիություն կապված իրենց կողմից Տարածքի սարքավորումից, ցանցից և/կամ Համացանցից կամ ֆայլերից, այդ թվում էլեկտրոնային փոստից օգտվելիս:

Տարածքը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները պահպանելու համար ցանցը հնարավոր կիրառանցավորության սպառնալիքներից: Դա կարող է ներառել արգելափակման մուտք տարածքային դիմումներին, ներառյալ առանց սահմանափակումների, էլեկտրոնային փոստ, տվյալների կառավարում և հաշվետվության գործիքներ և այլ դիմումներ Ամերիկայի Միացյալ Նահանգներից և Կանադայից դուրս:

Ուսանողի պատասխանատվություն

Սույն քաղաքականությունը ստորագրելով, Դուք ընդունում եք, որ հասկանում եք հետևյալ դրույթները՝

Ես պարտավորվում եմ կատարել քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները

- Ես կկատարեմ քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում կցուցաբերեմ համապատասխան վարքագիծ կայքերի, սոցիալական ցանցերի, քննարկման ակումբների, գանգվածային լրատվության կայքերի օգտվելիս և ցանկացած այլ էլեկտրոնային հոդադրագրությունների ժամանակ, այդ թվում նոր տեխնոլոգիա:
- Ես ազնվություն կցուցաբերեմ թվային կապի սարքավորումները օգտագործելիս
- Ես հասկանում եմ, որ այն ինչ էս անում եմ և տեղադրում եմ համացանցում, չպետք է խախտի դպրոցական գործողությունները կամ վարկաբեկի դպրոցի անվտանգությունն ու ապահովությունը:

Ես պատասխանատու եմ անձնական տեղեկատվությունը գաղտնի պահպանելու համար

- Ես չեմ տրամադրի անձնական տեղեկատվությունը իմ կամ մյուսների վերաբերյալ, ներառյալ առանց սահմանափակումների անվանումներ, տնային հասցեներ, հեռախոսահամարներ, ծննդյան օրեր կամ տեսողական գործիքներ, ինչպես օրինակ նկարներ, տեսագրություններ և զձագիբներ
- Ես չեմ հանդիպի անձամբ որևէ մեկին, ում ճանաչում եմ միայն Համացանցով
- Ես կտեղեկանամ այն կայքերի գաղտնիության կանոնակարգերի մասին, որոնք ես այցելում եմ
- Ես կպահպանեմ բոլոր օրենքները, սույն Գլխավոր օգտագործման քաղաքականությունը և Տարածքի բոլոր անվտանգության քաղաքականությունները

Ես պատասխանատու եմ Տարածքի հաշիվներում առկա իմ գաղտնաբառների և գործողությունների համար

- Ես չեմ տրամադրի դպրոցի կամ տարածքի օգտատերերի անվանումները և գաղտնաբառները որևէ մեկին
- Ես մուտք չեմ գործի մյուսների հաշիվներ տեղեկատվություն ստանալու համար
- Ես կանջատեմ առանց հսկողության թողնված սարքավորումները և հաշիվները գաղտնիություն և անվտանգություն պահպանելու համար



Los Angeles Unified School District
Գլխավոր օգտագործման քաղաքականություն (ԳՕՔ)
տարածքի համակարգչային համակարգերի համար
Տեղեկատվություն ուսանողների և ընտանիքների համար

Ես պատասխանատու եմ իմ բանավոր, գրավոր և գեղարվեստական արտահայտության համար

- Ես կօգտագործեմ դպրոցի հատուկ լեզուն բոլոր էլեկտրոնային հաղորդակցությունների ժամանակ, այդ թվում՝ էլեկտրոնային փոստ, սոցիալական ցանցեր, տեսաձայնագրություններ, վիդեո կոնֆերանսներ և գեղարվեստական աշխատանքներ

Ես պարտավորվում եմ մյուսներին վերաբերվել հարգանքով և արժանապատվությամբ

- Ես չեմ ուղղարկի կամ տարածի թշնամական, խտրականություն առաջացնող կամ քայքայող թվային հաղորդագրություններ կամ սեռական բնույթի հաղորդակցություններ

- Ես հասկանում եմ, որ ցանկացած հարձակողական վերաբերմունքը, այդ թվում՝ կիբերմոբինգը, անընդունելի է

Ես պատասխանատու եմ մուտք գործել միայն կրթական բովանդակությամբ նյութեր պարունակող կայքեր Տարածքի տեխնոլոգիայից օգտվելիս

- Ես չեմ փնտրի, տեղադրի կամ տարածի նյութեր, որոնք պարունակում են թշնամական լեզու, սեռական բռնի բնույթի նյութեր
Ես հասկանում եմ, որ բոլոր բացառությունները պետք է հաստատվեն ուսուցչի կամ ղեկավարի կողմից որպես դպրոցի հանձնարարության մաս
Ես հասկանում եմ, որ Տարածքի ցանցի օգտագործումը անօրինական, քաղաքական կամ առևտրային նպատակներով խստորեն արգելվում է

Ես պարտավորվում եմ հարգել և պահպանել Տարածքի էլեկտրոնային ռեսուրսների և ցանցերի անվտանգությունը

- Ես չեմ փորձի շրջանցել անվտանգության կանոնները, այդ թվում պրոքսի սերվերների օգտագործման միջոցով մուտք գործելու համար Տարածքի կողմից արգելափակված կայքեր
Ես չեմ տեղադրի կամ օգտագործի անօրինական ծրագրեր կամ ֆայլեր, այդ թվում հեղինակային իրավունքները պահպանած նյութերը, անօրինական ծրագրերը Տարածքի համակարգիչների, պլանշետների, սպարտֆոնների կամ այլ նոր տեխնոլոգիաների վրա
Ես գիտեմ, որ ես չպետք է օգտագործեմ համացանցը դպրոցում անձնական նպատակներով, այդ թվում անձնական բջջային մուտքի գոտիներ, որոնք հնարավորություն են տալիս մուտք գործել տարածքի սարքավորումներ
Ես չեմ օգտագործի տարածքի ցանցը կամ սարքավորումները ձեռք բերելու համար անօրինական տեղեկատվություն, փորձ կատարել ստանալ գաղտնի տեղեկատվություն, կամ գործել այլ օգտատերերի անունից:

Ես պատասխանատվություն եմ կրում Տարածքի սարքավորումից օգտվելիս

- Ես հակառակ եմ, որ որևէ տեսակի բարբարոսությունը արգելվում է
Ես կհայտնեմ բարբարոսության կասկածելի դեպքերի մասին համապատասխան մարմիններին
Ես զգուշությամբ կբերաբերվեմ Տարածքի սարքավորումներին իմ և մյուսների օգտագործման ժամանակ

Ես պարտավորվում եմ հարգել մյուսների աշխատանքը

- Ես կպահպանեմ բոլոր հեղինակային իրավունքի ուղեցույցները (http://copyright.gov/title17/)
Ես չեմ կրկնօրինակի մյուսների աշխատանքը՝ ներկայացնելով այն որպես իմ սեփականը և պատշաճ կերպով կնշեմ բոլոր օգտագործված աղբյուրները
Ես անօրինականորեն չեմ ներբեռնի երաժշտություն, ծրագրեր և այլ աշխատանքներ

Անպատասխանատու օգտագործման համար հետևանքները

Տարածքի սարքերի և ցանցի սխալ օգտագործումը կարող է հանգեցնել մուտքի սահմանափակման: Վերը թվարկված պարտականությունները չկատարելը համարվում է սխալ գործողություն: Այդպիսի գործողությունը կարող է նաև հանգեցնել ուսանողների նկատմամբ կիրառվող կարգապահական և/կամ իրավական գործողությունների, այդ թվում՝ նրանց հեռացում, կամ քրեական հետապնդում պետական մարմինների կողմից: Տարածքը փորձ կկատարի մշակել կարգապահական գործողություններ հատուկ հարցերի վերաբերյալ կապված բռնության հետ: (Ավելի մանրամասն տեղեկատվության համար, տես BUL-6399.0. Մոնիթորինգի քաղաքականություն ուսանողների համար)

Իրավունքից հրաժարում

Տարածաշրջանը չի երաշխավորում տրամադրված ծառայությունների որակի համար և պատասխանատվություն չի կրում ցանցի կամ Տարածքի հաշիվներից օգտվելիս պահանջների, կորստների, վնասների, ծախսերի կամ այլ պարտավորությունների համար: Օգտատերերը պատասխանատվություն են կրում բոլոր կրած ծախսերի համար տարածքի սարքերից և/կամ ցանցից օգտվելիս: Տարածքը նաև հրաժարվում է որևէ պատասխանատվությունից օգտատիրոջ մուտքից ձեռքբերված տեղեկատվության ճշգրտության կամ որակի համար: Առցանց առկա որևէ հայտարարություն համարվում է հեղինակի, այլ ոչ տարածքի, նրա կապակցված անձանց կամ աշխատողների անհատական տեսանկյուն, 18-ից



Los Angeles Unified School District
Գլխավոր օգտագործման քաղաքականություն (ԳՕՔ)
տարածքի համակարգչային համակարգերի համար
Տեղեկատվություն ուսանողների և ընտանիքների համար

ցածր ուսանողները կարող են մուտք գործել տարածքի ցանցային հաշիվներ դպրոցից դուրս միայն եթե ծնողը կամ իրավական խնամակալը վերահսկում են իրենց օգտագործումը: Ուսանողի ծնողը կամ խնամակալը պատասխանատու են վերահսկել անչափահաս երեխայի կողմից համացանցից օգտվելը դպրոցից դուրս:

Եզրակացություն

Բոլոր օգտատերները պատասխանատու են պահպանել քաղաքացու բոլոր իրավունքներն ու պարտականությունները: Քաղաքացու իրավունքների և պարտականությունները կատարումը ներառում է համապատասխան վարքագիծ և կայքերից, սոցիալական ցանցերից, քննարկման ակումբներից, զանգվածային լրատվության կայքերից օգտվելիս և բոլոր այլ էլեկտրոնային հաղորդագրությունների, այդ թվում նոր տեխնոլոգիա ժամանակ: Կարևոր է լինել ազնիվ քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները կատարելիս առանց հրապարակելու գաղտնի անձնական տեղեկատվություն: Տարածքային համայնքային անդամների գործողությունները և տեղադրումը համացանցում չպետք է խախտի դպրոցական գործողությունները և դպրոցի հասարակության անվտանգությունն ու ապահովությունը:

Ցուցումներ

Ընթերցեք և դրեք Ձեր անվան սկզբնատառերը յուրաքանչյուր բաժնում և ստորագրեք: Ամպայման վերանայեք յուրաքանչյուր բաժինը ծնողի կամ խնամակալի հետ և ապահովեք նրանց ստորագրությունը ստորև: Վերադարձրեք այն Ձեր ուսուցչին կամ դպրոցի այլ աշխատակցին:

Ես ընթերցել եմ, հասկանում եմ և համաձայն եմ պահպանել Լոս Անջելեսի Միասնական Դպրոցի տարածքի գլխավոր օգտագործման քաղաքականության դրույթները:

Ամսաթիվը` _____

Դպրոցը` _____

Ուսանողի անունը` _____

Ուսանողի ստորագրությունը` _____

Ծնողի/օրինական Խնամակալի անունը` _____

Ծնողի/իրավական խնամակալի ստորագրությունը` _____

Ուսուցչի անունը` _____

Մենյակի համարը` _____

Խնդրում եմ վերադարձնել սույն ձևը դպրոցին այն պահպանելու համար: Բոլոր ուսանողները պետք է օգտվեն համակարգչային ցանցից և/կամ Համացանցից: